ՍՏԱՑԵՔ COVID-19-Ի ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԸ ԱՅՆ ԱՆՎՏԱՆԳ Է ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ:

Փաստեր պատվաստանյութի անվտանգության և COVID-19-ի կանխարգելման մասին

Ավելին իմացեք hpsm.org/covid-19/vaccination կայքում

Ինչո՞ւ է կարևոր ստանալ COVID-19-ի պատվաստանյութը:

Չնայած COVID-19 ունեցող մարդկանց մեծամասնությունը թեթև ախտանիշներունեն, COVID-19-ը կարող է հանգեցնել նաև լուրջ հիվանդության կամ մահվան: COVID-19-ի պատվաստանյութը ստանալը կարևոր է, քանի որ այն օգնում է՝

- ✓ Ապահով պահել Ձեր ընտանիքը և համայնքը
- ✓ Դադարեցնել համավարակ
- ✓ Ապագայում մեզ կրկին միացնել միմյանց, որպեսզի կարողանանք միասին հավաքվել, իսկ երեխաները կարողանան անձամբ դպրոց վերադառնան սովորելու համար

Ինչպե՞ս կարող են պատվաստանյութերն անվտանգ լինել, եթե այդքան արագ են պատրաստել:

COVID-19-ի պատվաստանյութի արագ մշակումը հնարավոր է դարձել, քանի որ.

- Պատվաստանյութերը հիմնված են տասնամյակներ տևող հետազոտությունների վրա: Գիտնականները 20 տարուց ավել է ուսումնասիրում են կորոնավիրուսները: COVID-19-ն առաջացնող կորոնավիրուսը պարզապես կորոնավիրուսների բազմաթիվ տեսակներից մեկն է:
- Ամբողջ աշխարհի գիտնականները տվյալներ կիսեցին միմյանց հետ:
- Ամբողջ աշխարհում շատ մեծ գումարներ ծախսվեցին հետազոտության վրա:
- Շատ մարդիկ գրանցվեցին պասվաստանյութի ուսումնասիրություններում մասնակցելու համար:

Մինչ օրս FDA-ն հաստատել է COVID-19-ի երեք պատվաստանյութերը՝

moderna

Pfizer

Johnson & Johnson

FDA-ն ոչ մի քայլ *չի* բացթողել COVID-19-ի պատվաստանյութերի անվտանգությունը և արդյունավետությունը ստուգելու գործընթացում: COVID-19-ի պատվաստանյութերը ենթարվել են դեղերի ստուգման նույն մեթոդներին, որոնք մասնագետներն օգտագործում են տասնամյակներ շարունակ՝ դեղերի անվտանգությունը և արդյունավետությունը հաստատելու համար:

Ինչպե՞ս են պատվաստանյութերն օգնում պաշտպանել ինձ COVID-19-ից:

Պատվաստանյութերն ասում են Ձեր բջիջներին, որ արտադրեն անվտանգ սպիտակուց, որն առկա է COVID-19-ում: Ձեզ այդ սպիտակուցից [փրոթէին] պաշտպանելով՝ Ձեր մարմինը սովորում է պաշտպանել Ձեզ COVID-19-ից: **COVID-19-ի պատվաստանյութերից ոչ մեկը որևէ կերպով չի փոխում Ձեր գեները:**

- Pfizer-ը և Moderna-ն երկուան էլ (mRNA) պատվաստանյութեր են: Նրանք օգտագործում են լրաբեր (mRNA)՝ են օգտագործում, ասելու մարմնի բջիջներին, որ սպիտակուց [փրոթէին] արտադրեն: Երկու պատվաստանյութերը լիովին պաշտպանում են COVID-19-ից դեպքերի մոտ 95%-ում:
- Johnson & Johnson-ը վիրուսային վեկտորի պատվաստանյութ է: Այն օգտագործում է փոփոխված, անվտանգ հարբուխի վիրուս՝ ասելու մարմնի բջիջներին, որ սպիտակուց [փրոթէին] արտադրեն:

Johnson & Johnson պատվաստանյութը լիովին պաշտպանում է COVID-19-ից դեպքերի 72%-ում: Դրա օգտագործումը կանգնեցվեց կարճ ժամանակով, բայց քանի որ նահագային և դաշնային կառավարությունը հայտարարեց, որ այն անվտանգ է, San Mateo քաունթի Առողջապահության բաժինը սկսեց կրկին օգտագործել այն: Պատվաստանյութը կունենա զգուշացման պիտակ և տեղեկատվական նյութեր, որպեսզի բնակիչները որոշեն, եթե ցանկանում են ստանալ այս պատվաստանյութը:

Կարո՞ղ եմ COVID-19-ով վարակվել COVID-19-ի պատվաստանյութից:

Դուք չեք կարող COVID-19-ով վարակվել COVID-19-ի պատվաստանյութից: Դուք կարող եք կողմնակի ազդեցություններ ունենալ պատվաստվելուց հետո: Սա չի նշանակում, որ COVID-19 ունեք: Սա նորմալ նշան է, որ պատվաստանյութը գործում է: Տարածված կողմնակի ազդեցություններից են՝

- Ցավ, այտուց և կարմրություն ձեռքի այն հատվածում, որտեղ սրսկվել եք
- Մարմնի դող, հոգնածություն և գլխացավ մարմնի բոլոր մյուս մասերում

Կողմնակի ազդեցություններից շատերը թեթևից միջին լրջության են և անցնում են երեք օրից: Եթե չեն անցնում, կամ եթե հարցեր ունեք, զանգահարեք Ձեր առաջնային խնամքի մատակարարին (primary care provider, PCP) կամ HPSM-ի Բուժքույրերի խորհրդատվական գիծ՝
1-833-846-8773 հեռախոսահամարով:

Ես COVID-19 եմ ունեցել Արդյո՞ք պետք է պատվաստվե՞մ:

Այո, Դուք պետք է պատվաստվեք, նույնիսկ եթե COVID-19 եք ունեցել: Մասնագետները չգիտեն, թե որքան երկար են մարդիկ պաշտպանված COVID-19-ից՝ հիվանդանալուց հետո: Եթե կրկին COVID-19 հիվանդանաք, կարող եք վարակել Ձեր մտերիմներին:

Ես առողջական խնդիրներ ունեմ. արդյո՞ք պետք է COVID-19 պատվաստանյութ ստանա՞մ:

Եթե առողջական խնդիրներ ունեք, ինչպես օրինակ՝ սրտի հիվանդություն, շաքարախտ կամ թոքային հիվանդություն, Դուք կարող եք և պետք է պատվաստվեք: Հնարավոր է, որ Ձեզ համար շատ ավելի կարևոր է պատվաստվել: Ավելի հավանական է, որ առողջական խնդիրներ ունեցող մարդիկ ծանր տանեն COVID-19 հիվանդությունը կամ նույնիսկ մահանան դրանից:

Զանգահարեք Ձեր բժշկին նախքան COVID-19-ի պատվաստանյութ ստանալը, եթե Դուք՝

- **Լրացուցիչ հարցեր ունեք պատվաստվելու անվտանգության մասին**
- **Ալերգիա ունեք Polyethylene glycol (PEG) կամ Polysorbate նկատմամբ**
- **Համոզված չեք Ձեր ալերգիաների մասին**

Արդյո՞ք հղի և կրծքով կերակրող կանայք պետք է պատվաստվեն:

Ներկայիս փաստերի վրա հիմնվելով՝ առողջապահության մասնագետները կարծում են, որ COVID-19-ի պատվաստանյութն անվտանգ է հղի, հղիանալ ցանկացող և կրծքով կերակրող կանանց համար:

Ի՞նչ արժե COVID-19-ի պատվաստանյութը:

HPSM անդամների համար պատվաստանյութն անվճար է: Ժամադրություն նշանակելու մասին մանրամասների համար այցելեք hpsm.org/vax կայքը: